ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……- 2 -

1. Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը……- 3 -

1.1 2020 թվականի վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշները՝ 2018-2019թթ. համեմատությամբ……- 3 -

1.2 Ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություն……- 18 -

2. Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները……- 23 -

3. Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք……- 29 -

4. Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները……- 35 -

5. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը……- 38 -

6. Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով…… - 39 -

7. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին……....- 43 -

8. Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում……- 50 -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) 2020 թվականի գործունեության տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) կազմման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N733-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկում միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ: ՈՒղղություններն են՝

- ✓ մթնոլորտային օդի պահպանություն
- ✓ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- ✓ հողերի օգտագործում և պահպանություն
- ✓ ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- ✓ կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- ✓ վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- ✓ պետական փորձաքննություն
- ✓ բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- ✓ վիճակագրական հաշվետվություններ

1. Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը

Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 733-Լ որոշման հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

Տեսչական մարմնի գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացնելու նպատակով հիմք են հանդիսացել Տեսչական մարմնի կողմից 2018-2019-2020 թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքները՝ պայմանավորված առավել ռիսկային ուղղությունների բացահայտմամբ, որոնցում առավել հաճախ են արձանագրվել իրավախախտումներ:

1.1 2020 թվականի վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշները՝ 2018-2019թթ. համեմատությամբ

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է թվով 1605 իրավախախտում:*

Աղյուսակ 1-ում և *Գծապատկեր 1-ում* ներկայացված են 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից արձանագրված իրավախախտումների քանակը՝ 2018-2019թթ" համեմատությամբ: Համաձայն այդ տվյալների 2020 թվականի իրավախախտումների թիվը

2019 թվականի համեմատությամբ 16% նվազել է, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ աճել 47.4%:

Աղյուսակ 2-ում ներկայացված են տոկոսային արտահայտմամբ արձանագրված իրավախախտումներն՝ ըստ առավել ռիսկային ուղղությունների:

Աղյուսակ 1

Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը՝ ըստ վերահսկողական ուղղությունների

h/h	*Ուղղությունները*	*2018 թվական*	*2019 թվական*	*2020 թվական*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	767	1121	968
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	59	225	133
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	65	54	42
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	36	98	93
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	4	9	17
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	36	57	44
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	18	21	13
8	**Վիճակագրական հաշվետվություններ**	98	268	284
9	**Պետական փորձաքննություն**	6	10	11
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1089**	**1863**	**1605**



Աղյուսակ 2

Տեսչական մարմնի կողմից հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը՝ ըստ վերահսկողական ուղղությունների

h/h	***ՈՒղղությունները***	***2018 թվական %***	***2019 թվական %***	***2020 թվական %***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	70.4	60.2	60.3
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	5.4	12.1	8.3
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	6.0	2.9	2.6
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	3.3	5.3	5.8
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	0.4	0.5	1.1
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	3.3	3.1	2.7
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	1.7	1.1	0.8
8	**Վիճակագրական հաշվետվություններ**	9.0	14.4	17.7
9	**Պետական փորձաքննություն**	0.6	0.5	0.7
ԸՆԴԱՄԵՆԸ		**100**	**100**	**100**

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 964 վարչական վարույթ, որից 110-ը ստուգումներով: Վարչական վարույթները հարուցվել են Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ՀՀ իրավապահ մարմիններից, ՀՀ պետական այլ մարմիններից ստացված գրությունների, ահազանգերի և այլ հիմքերով:*

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը՝ 2018-2019թթ" համեմատությամբ և ըստ Տեսչական մարմնի կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումների: Համաձայն այդ տվյալների 2020 թվականին հարուցված վարչական վարույթների թիվը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 27,4%, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ 12,1%:

Աղյուսակ 3

Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը

Հ/Հ		*2018 թվական*	*2019 թվական*	*2020 թվական*
1	**Երևանի տարածքային բաժին**	223	247	146
2	**Արագածոտնի տարածքային բաժին**	78	95	101
3	**Արարատի տարածքային բաժին**	46	100	38
4	**Արմավիրի տարածքային բաժին**	35	30	27
5	**Կոտայքի տարածքային բաժին**	31	84	64
6	**Գեղարքունիքի տարածքային բաժին**	80	124	61
7	**Տավուշի տարածքային բաժին**	292	259	234
8	**Լոռու տարածքային բաժին**	128	134	145
9	**Շիրակի տարածքային բաժին**	52	40	35
10	**Վայոց ձորի տարածքային բաժին**	37	13	42
11	**Սյունիքի տարածքային բաժին**	21	48	34
12	**Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն**	11	20	13
13	**ՋՄՀԹՎՆ վերահսկողության վարչություն**	29	14	7
14	**Ընդերքի վերահսկողության վարչություն**	18	20	17
ԸՆԴԱՄԵՆԸ		**1081**	**1228**	**964**

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում հարուցված վարչական գործերի վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել 776 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է թվով 800 վարչական տուգանք:*

Աղյուսակ 4-ում և *Գծապատկեր 2-ում* ներկայացված են 2020թ. ընթացքում Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքների քանակը՝ 2018-2019թթ. համեմատությամբ: Համաձայն այդ տվյալների 2020 թվականի տուգանքների թիվը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 14%, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ 3.4% աճել:

Աղյուսակ 4

Տեսչական մարմնի կողմից վարչական տուգանքների քանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների

Հ/Հ	ՈՒղղությունները	2018 թվական	2019 թվական	2020 թվական
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	504	427	324
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	32	37	36
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	59	48	37
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	35	85	87
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	4	7	16
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	20	29	21
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	17	16	12
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	97	255	254
9	**Պետական փորձաքննություն**	6	10	13
	ԸՆԴԱՄԵՆԸ	**774**	**914**	**800**



❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում հարուցված վարչական գործերի վարույթների արդյունքում կիրառված վարչական տուգանքի չափը կազմել է 75,736,000 ՀՀ դրամ:*

Աղյուսակ 5-ում և *Գծապատկեր 3-ում* ներկայացված են 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի չափը՝ 2018-2019թթ. համեմատությամբ:

Համաձայն այդ տվյալների 2020 թվականի ընթացքում կիրառված տուգանքների չափը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 17%, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ աճել 8%:

Աղյուսակ 6-ում ներկայացված են տոկոսային արտահայտմամբ Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի չափը՝ ըստ առավել ռիսկային ուղղությունների:

Աղյուսակ 5

Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների

ՀՀ դրամ

Հ/Հ	ՈՒղղությունները	2018 թվական	2019 թվական	2020 թվական
1	Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն	44,340,000	41,330,000	33,836,000
2	Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն	3,040,000	3,170,000	2,300,000
3	Մթնոլորտային օդի պահպանություն	4,400,000	3,850,000	2,750,000
4	Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	7,450,000	18,350,000	16,210,000
5	Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	200,000	530,000	1,170,000
6	Հողերի օգտագործում և պահպանություն	1,540,000	2,310,000	1,330,000
7	Ընդերքօգտագործում և պահպանություն	1,650,000	1,150,000	1,350,000
8	Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում	6,880,000	16,620,000	15,690,000
9	Պետական փորձաքննություն	600,000	850,000	1,100,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**70,100,000**	**88,160,000**	**75,736,000**



Աղյուսակ 6

Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքները տոկոսային արտահայտմամբ՝ ըստ վերահսկողական ուղղությունների

ՀՀ դրամ

Հ/Հ	ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	2018 թվական	2019 թվական	2020 թվական
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	63.3	46.9	44.7
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	4.3	3.6	3.0
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	6.3	4.4	3.6
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	10.6	20.8	21.4
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	0.3	0.6	1.5
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	2.2	2.6	1.8
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	2.4	1.3	1.8
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	9.8	18.9	20.7
9	**Պետական փորձաքննություն**	0.9	1.0	1.5
ԸՆԴԱՄԵՆԸ		**100.0**	**100.0**	**100.0**

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում վերահսկողական աշխատանքների արդյունքում իրականացվել է 1081 վնասի հաշվարկ և հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 1,555,314,746 ՀՀ դրամի չափով վնաս:*

Աղյուսակ 7-ում, *8-ում* և *Գծապատկեր 4-ում* ներկայացված են 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացված վնասի հաշվարկների թվաքանակը և հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ 2018-2019թթ. համեմատությամբ: Համաձայն այդ տվյալների.

- 2020 թվականի վնասի հաշվարկների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 26%, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ աճել 31%,
- 2020 թվականի հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 71%, իսկ 2018 թվականի՝ 4%:

Աղյուսակ 7

Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի քանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների

Հ/Հ	*Ուղղությունները*	*2018 թվական*	*2019 թվական*	*2020 թվական*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	722	1,117	947
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	47	176	85
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	28	18	12
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	5	15	14
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	24	43	23
ԸՆԴԱՄԵՆԸ		**826**	**1,369**	**1,081**

Աղյուսակ 8

Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների

ՀՀ դրամ

h/h	*Ուղղությունները*	*2018 թվական*	*2019 թվական*	*2020 թվական*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	1,071,368,140	1,451,276,420	814,714,436
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	11,924,500	19,176,384	641,856,340
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	500,625,330	414,407,196	25,227,496
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	6,200,320	659,987,776	32,962,318
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	28,785,350	109,929,299	40,554,156
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,618,903,640**	**2,654,777,075**	**1,555,314,746**



❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է 759 նյութ՝ համաձայն որի շրջակա միջավայրին հասցված վնասը կազմել է 1,245,344,728 ՀՀ դրամ:*

<u>Աղյուսակ 9-ում</u> ներկայացված են 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրավապահ մարմիններին ուղարկված նյութերի քանակը և այդ նյութերով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ 2018-2019թթ. համեմատությամբ: Համաձայն այդ տվյալների.

- 2020 թվականին իրավապահ մարմիններին ուղարկված նյութերի քանակը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 8%, իսկ 2018 թվականի համեմատությամբ աճել՝ 261%,
- 2020 թվականին իրավապահ մարմիններին ուղարկված նյութերով հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 19%, իսկ 2018 թվականի համեմատությամբ աճել՝ 48%:

			Աղյուսակ 9
h/h	***Ժամանակահատվածը***	***Իրավապահ մարմիններին ուղարկված***	
		Նյութերի քանակը	***Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը (ՀՀ դրամ)***
1	*2*	*3*	*4*
1	***2018 թվական***	210	841,962,420
2	***2019 թվական***	820	1,485,809,280
	2020 թվական	759	1,245,344,728
ԸՆԴԱՄԵՆԸ		**1789**	**3,573,116,428**

❖ *Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում բուսական աշխարհի պահպանության ոլորտում իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում 2020 թվականի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել է 12,978 հատ հատված ծառ և 1646,4 խմ փայտանյութի ապօրինի տեղափոխման դեպք:*

<u>Աղյուսակ 10-ում</u> ներկայացված են 2020 թվականի ընթացքում հայտնաբերված և արձանագրված ապօրինի ծառահատումների թիվը և ապօրինի տեղափոխված փայտանյութի ծավալը՝ 2018-2019թթ. համեմատությամբ: Համաձայն այդ տվյալների.

- 2020 թվականին հայտնաբերված և արձանագրված ապօրինի ծառահատումների թիվը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 29,6%, իսկ 2018 թվականի համեմատությամբ աճել՝ 1,2%,

- 2020 թվականին ապօրինի տեղափոխված փայտանյութի ծավալը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 94%, իսկ 2018 թվականի համեմատությամբ աճել՝ 84,5%:

			Աղյուսակ 10
h/h	***Ժամանակահատվածը***	***Ծառահատումների քանակը (հատ)***	***Փայտանյութի ապօրինի տեղափոխում (խմ)***
1	*2*	*3*	*4*
1	***2018 թվական***	12,821	892
2	***2019 թվական***	16,818	3,192
	2020 թվական	12,978	1,646
ԸՆԴԱՄԵՆԸ		**42,617**	**5,730**

❖ *Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում 2020 թվականին կենդանական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել են Կարմիր գրքում գրանցված 2 կրկնակտցարի և 1 խայտաքիսի, 1 կաքավի, 59 լորի, 1 վայրի խոզի, 3 սև փարփարի, և 1 տափաստանային ճուռակի ապօրինի որսի դեպքեր: Առգրավվել է 217 հատ ձկնագողության պարագա, 13 հատ հրացան, 34 հատ փամփուշտ, 1 փամփշտակալ և 1 լոր կանչելու արգելված էլ. սարք:*

❖ *Առգրավվել է 129686,66 կգ սիգ, որից միայն 2020 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ իրականացված գործողությունների արդյունքում հայտնաբերվել են հանցագործության հատկանիշներով առանձնապես խոշոր չափերի բնապահպանական օրենսդրության խախտման 6 դեպք: որոնց առնչությամբ հաշվարկվել է 632 580 000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս (126,516 կգ սիգ):*

- Գեղարքունիքի մարզ՝ ապօրինի ձկնորսության և պահեստավորման 4 դեպք, որոնց վերաբերյալ հաշվարկվել է 341 580 000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս (68,316 կգ սիգ):
- Կոտայքի մարզ՝ ապօրինի ձկնորսության և պահեստավորման 2 դեպք, որոնց վերաբերյալ հաշվարկվել է 291 000 000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս (58,200 կգ սիգ):

❖ *Պետական բյուջե 2020 թվականի ընթացքում մուտքագրվել է 97,376,573.90 ՀՀ դրամ: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:*

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 350 որոշում 40,406,610 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով:*

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում վերահսկողության շրջանակներում իրականացվել է թվով 738 լաբորատոր փորձաքննություն, որից մթնոլորտային օդի՝ 30, հոսքաջրի՝ 642 և հողի՝ 66:*

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից իրականացված (COVID-19) միջոցառումները

❖ *Պարետի որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանափակվել էր մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և սահմանվել անձանց պարտադիր ինքնամեկուսացում իրենց մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի հնարավոր տարածումը կանխելու նպատակով:*

❖ *Պարետի մեկ այլ որոշմամբ և Տեսչական մարմնի ղեկավարի շրջաբերականի հիման վրա աշխատանքի չեն հաճախել բազմազավակ մայրերը, 60 և ավելի տարիք և/կամ շաքարային դիաբետ, սրտանոթային, շնչառական հիվանդություններ կամ այլ խրոնիկ հիվանդություններ ունեցող թվով 34 անձինք, որոնք աշխատանքներն իրականացրել են հեռավար կարգով:*

❖ *Տեսչական մարմինը ՀՀ ոստիկանության հետ համատեղ 2020 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացրել է հսկողություն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմական, մշակութային, բնական, գիտական և այլ գրավչության օբյեկտներում, բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսների կենտրոնացմամբ տարածքներում, հանգստյան ճամբարներում և ճամբարային բնակատեղիներում (համալիրներում) մարդկային կուտակումները և անկանոն հերթերը բացառելու,*

քաղաքացիների դիմակ կրելու և սոցիալական հեռավորություն պահպանելու նպատակով, ինչպես նաև ապահովել է քաղաքացիներին դիմակներով (Աղյուսակ 11):

			Աղյուսակ 11
Ամիս	***Հերթապահության վայրերի քանակ***	***Խախտման արձանագրության քանակ***	***Նախազգուշացման քանակ***
հունիս	31	23	570
հուլիս	55	20	1311
օգոստոս	55	14	703
սեպտեմբեր	9	6	235
Ընդամենը	150	63	2819

❖ *«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման համաձայն Տեսչական մարմնում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման համար իրազեկվել են համաճարակային անվտանգության կանոնները, վարվել են անձնակազմի ջերմաչափման և առողջական վիճակի վերաբերյալ զննման արդյունքների գրանցման գրանցամատյանը և ախտահանման գործընթացի վերաբերյալ գրանցումների գրանցամատյանը: Սակայն աշխատակիցների շրջանում արձանագրվել են կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) վարակման 42 դեպք: Պարետի որոշման համաձայն կատարվել է աշխատասենյակների ախտահանում և թվով 30 կոնտակտավորի մեկուսացում:*

❖ *Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հիմքով և Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականով իրականացվել է շուրջօրյա հերթապահություն: Տեսչական մարմնի հաշվեկշռում գտնվող ավտոմեքենաներով հումանիտար օգնություն է տեղափոխվել Արցախի Հանրապետություն և բաժանվել ազգաբնակչությանը: Տեսչական մարմնի աշխատակիցները 28.09-30.12. 2020թթ. ընթացքում թվով 81 երթուղիներով իրականացրել են Հայաստանի Հանրապետության կառավարության և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրված տարբեր բնույթի հանձնարարականներ:*

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն

❖ *Տեսչական մարմնի կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.*

- Եվրոպական Հանձնաժողովի տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիքի (Թայեքս) շրջանակներում մասնագիտական կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում Տեսչական մարմնի թվով 16 մասնագետ 2020 թվականի նոյեմբեր ամսին անցել են վերապատրաստում՝ տեսչական վերահսկողության ԵՄ լավագույն փորձի փոխանակում և շրջակա միջավայրի ռիսկերի կառավարում թեմաների վերաբերյալ:
- 2020 թվականի դեկտեմբերի 7 -ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական մոնիտորինգ (մոնիտորինգ) իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ վարչապետի N 1326–Լ որոշումը:
- Շրջակա միջավայրի նախարարության ու Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի միջև ձեռք է բերվել գրավոր պայմանավորվածություն «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում Տեսչական մարմնի կարողությունների հզորացման նպատակով ստեղծել էլեկտրոնային վերահսկողության համակարգ՝ համապատասխան էլեկտրոնային ծրագրի, պլանշետների և լաբորատոր սարքավորումների ապահովմամբ: ՀՀ վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման աջակցությամբ սույն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակման փուլում է:
- Տեսչական մարմնի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համագործակցության արդյունքում

նկարահանվել է Սևանա լճի հիմնախնդիրների վերաբերյալ սոցիալ-բնապահպանական գովազդ, որի առաջին ցուցադրությունը նախատեսվել է 2021 թվականի փետրվարի 10-ին:

- ՀՀ-ում գործող մի շարք միջազգային կառույցների հետ ձեռք է բերվել փոխհամագործակցության պայմանավորվածություններ՝ Տեսչական մարմնի կարողությունների զարգացման, տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, տեխնիկական աջակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Մասնավորապես.

Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF)
Կովկասյան Բնության Հիմնադրամ (CNF)
Գերմանիայի Բնության Պահպանության Միության Հայաստանյան մասնաճյուղ (NABU)
Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-ՀՀ (SPPA)
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (UNDP)
ՋԻ ԱՅ ԶԵԹ Հայաստան (GIZ)
ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելություն

1.2 Ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություն

❖ *Բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է Տեսչական մարմնի կողմից 2018-2019-2020թթ. ընթացքում իրականացված վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշների արդյունքներով՝ համաձայն որոնց որպես առավել ռիսկային ուղղություններ թիրախավորվել են՝*

Բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության ուղղություն

Համատարած անտառհատման ենթարկված տարածքներում էկոլոգիական վիճակի բացասական փոփոխությունները երկարաժամկետ բնույթ են կրում: Սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով անտառհատումները դեռևս գերազանցում են անտառի բնական վերականգնման ծավալները: Դրան նպաստում են փայտանյութի մատչելիությունը, էներգակիրների գների բարձրացումը, բնակչության սոցիալապես անապահով խավերի ցածր վճարունակությունը և իհարկե ոչ բավարար հսկողությունը: Անտառհատումների արդյունքում ինտենսիվ բնույթ

են կրում անտառի կազմի անցանկալի փոփոխությունները՝ անտառի նոսրացում, տնտեսապես բարձրարժեք կաղնուն և հաճարենուն փոխարինում է ցածրարժեք բոխին, անտառի ստորին գոտու տեսակների (այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված) անհետացմանը: Վերջին տարիներին անտառային զանգվածների հատված տեղամասերում և դրանց հարող տարածքներում նկատվում է հողմատապալ կամ ձնետապալ տարածքների ընդարձակում, հողատարման, ձորակառաջացման, սողանքների, էրոզիոն-սելավային պրոցեսների ակտիվացում, աղբյուրների չորացում, փոշու ամպերի գոյացում և այլ երևույթներ, որոնք մեծ վնաս են հասցնում համայնքներին և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին: Որպես անտառային էկոհամակարգերի որակական հատկանիշների փոփոխման հետևանք կարող են դիտվել վնասատուների զանգվածային համաճարակները: Ավելացել են անտառային հրդեհների ծավալները, որոնց դեմ պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացմանը խոչընդոտում են բարդ ռելիեֆը, անտառային ճանապարհային ցանցի անմխիթար վիճակը, հրդեհների մարման տեխնիկական սարքավորումների բացակայությունը և այլն:

Տեսչական մարմինը Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF) հետ ձեռք է բերել պայմանավորվածություն օպերատիվ վերահսկողություն իրականացնելու համար անտառային ճանապարհների մուտքերի և ելքերի վրա տեղադրել թաքնված (հողի տակ) սենսորային համակարգեր (Virtual Ranger), որն հնարավորություն կտա առավել արդյունավետ վերահսկողություն իրականացնել սույն ոլորտում:

Ընդերքօգտագործման և պահպանության ուղղություն

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից ընդերքի պահպանության ոլորտում առավել հաճախ արձանագրվել են ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջների խախտումներ՝ ընդերքի ապօրինի արդյունահանում, պահպանություն, նախագծային շեղում, փաստաշրջանառություն, վերամշակում, փորձաքննություն, տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վնասում:

Հայտնաբերված խախտումների վերացման նպատակով Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից կիրառվել են տարբեր կանխարգելիչ միջոցառումներ, մասնավորապես՝ հաղորդում իրավապահ մարմիններին վնասի փոխհատուցման պահանջով, խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և այլն:

«Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2020 թվականի օգոստոսի 16-ին ընդունել է օրենք, ինչպես նաև 2020 թվականի հոկտեմբերի 17-ի ընդունված օրենքով լրացումներ և փոփոխություններ է կատարել «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, որոնք գործնականում կիրառվելու են 2021 թվականին:

Երկու օրենքների դրույթների գործածության վերաբերյալ Տեսչական մարմնի նպատակի և խնդիրների իրականացման նպատակահարմարությունից ելնելով 2021 թվականին կկազմակերպի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումներ:

Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ուղղություն

Հիմնական ռիսկերը ի հայտ են եկել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու պահից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1291-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետությունում գործող տնտեսավարող սուբյեկտները բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկները եռամսյակային կտրվածքով ներկայացնում են Պետական եկամուտների կոմիտե՝ միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգով: Նույն որոշման հավելվածի 5-րդ կետով՝ «Վճարողը լրացնում է միասնական հարկային հաշվարկի հավելվածը (արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքի համար, ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման

թափոնները տեղադրելու և (կամ) պահելու համար բնապահպանական հարկի և (կամ) բնօգտագործման վճարի), որը պետք է ներկայացնի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ հաստատման»: Վերջինս չի իրականացվում, քանի որ Տեսչական մարմինը՝ որպես լիազոր մարմին, անմիջական հասանելիություն չունի միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգին: Արդյունքում 2020 թվականին արձանագրվել է Հայաստանի Հանրապետությանում գործող տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի միասնական հարկային հաշվարկների չներկայացման դեպքերի աճ, ինչպես նաև Տեսչական մարմինը չունի հնարավորություն լիարժեք իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ հաշվետվությունների թերի կամ աղավաղումներով ներկայացման առնչությամբ: Վերոգրյալ հաշվարկների վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեի կողմից Տեսչական մարմնին տրամադրվում է էլեկտրոնային փոստով՝ համակարգից Excel ձևաչափով ներբեռնած տարբերակով, ինչը առաջացնում է մի շարք խոչընդոտներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և Տեսչական մարմնին վերապահված գործառույթների լիարժեք, օպերատիվ և արդյունավետ իրականացման առնչությամբ:

Մթնոլորտային օդի պահպանության ուղղություն

Առավել բարձր ռիսկային են համարվում ցեմենտի, գաջի արտադրությամբ, հանքարդյունաբերությամբ, գունավոր մետաղների վերամշակմամբ զբաղվող կազմակերպությունները: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների բարձր կոնցենտրացիների պատճառը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտներին տրված թույլտվության չափաքանակների արտանետումների գերազանցմամբ՝ հատկապես անօրգանական փոշու, ծծմբային անհիդրիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների, ցիանաջրածնի և այլ վնասակար նյութերի արտանտումներով: Հիմնականում խնդիրները պայմանավորված են սահմնային թույլատրելի արտանետումների նախագծով նախատեսված արտադրողականության ծավալների գերազանցման պատճառով, որոշ տնտեսվարողներ աշխատում են առանց հեռացող գազերի մաքրման համակարգի՝ հատկապես գունավոր մետաղների վերամշակմամբ զբաղվողները չեն ապահովում մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մաքրման համար բնապահպան կառույցների և սարքավորումների սարքինությունը, անընդմեջ և արդյունավետ աշխատանքը: Առանց մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների սահմանված նորմատիվների գործունեություն իրականացնելը բերում է մթնոլորտային օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունների բարձրացմանը, մթնոլորտային օդի աղտոտվածությանը:

Ավտոտրանսպորտային միջոցները շահագործվում են առանց վնասակար նյութերի արտանետումների սահմանված նորմատիվների կարգավորման: Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման կետերում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի իրականացվում:

Ամբողջովին չի իրականացվում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի չափագրական աշխատանքներ: Անալիտիկ լաբորատոր և չափագրական հետազոտությունների ոչ լիարժեք իրականացումը հանգեցնում է ռիսկերի բարձրացմանը:

Ջրերի օգտագործման և պահպանության ուղղություն

Առավել բարձր ռիսկային են համարվում Արարատյան դաշտի արտեզյան ջրավազանից և Հայաստանի Հանրապետության տարածքում ձկնատնտեսական նշանակության մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնող, ինչպես նաև արտադրական կեղտաջրերը դեպի մակերևույթային ջրեր հեռացնողները:

Արարատյան դաշտում բարձր ռիսկային են համարվում ձկնաբուծության, ոռոգման և խմելու, կոմունալ-կենցաղային նպատակներով ստորգետնյա ջրատար հորիզոնից ջրառ իրականացնողները: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել ջրօգտագործման հաշվառման (ջրաչափերի տեղադրման) և ստացած ջրօգտագործման թույլտվության բոլոր պայմանների կատարման պահանջները:

Կարևոր է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնողների կողմից, հատկապես ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում գետերի էկոլոգիական թողքերի պահպանման և ձկնապաշտպան կառույցների ու սարքավորումների առկայության խնդիրները:

Բարձր ռիսկային ջրօգտագործողներ են համարվում նաև Սևանա լիճ և լճի ջրահավաք ավազան կեղտաջրեր հեռացնող տնտեսավարողները, ՋՕԸ-երը և փոքր հիդրոէլեկտրակայաններ շահագործող կազմակերպությունները:

Հողերի օգտագործման և պահպանության ուղղություն

Առավել բարձր ռիսկերը պայմանավորված են՝

- ✓ հողի վերին՝ բերրի շերտի ապօրենի տեղափոխմամբ,
- ✓ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելով,

2020 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացվել արտադրական, ճանապահաշինարարական, ընդերքշահագործող և այլ ձեռնարկություններում: Ստուգման ընթացքում արձանագրվել են հողերի ոչ ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման դեպքեր:

Վտանգավոր նյութերի և թափոնների գործածության ուղղություն

Հիմնական ռիսկերը պայմանավորված են՝

- ✓ արտադրական և սպառման թափոնները չթուլատրված տեղերում տեղադրմամբ,
- ✓ սահմանված կարգին համապատասխան վտանգավոր թափոնների անձնագրերի բացակայությամբ,
- ✓ թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայությամբ,
- ✓ թափոնների գույքագրումը, սկզբնական և ընդհանուր հաշվառման գրքերի վարման բացակայությամբ,
- ✓ վտանգավոր թափոննեի վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայությամբ:

2. Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները.

❖ *Տեսչական մարմինն առաջնորդվել է 2019 թվականի նոյեմբերի 29-ին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված «Տեսչական մարմնի 2020 թվականի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրով», նախաձեռնել, կազմակերպել և իրականացրել ծրագրային կետերով պլանավորված միջոցառումները:*

Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հասարակության տեղեկատվածության բարձրացման, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքներն ապահովելու նպատակով, ՀԼՄ-ների հետ համագործակցության արդյունքում Տեսչական մարմնի ղեկավարը, պաշտոնատար այլ անձիք մասնակցել են թվով 42 հեռուստա և ռադիո հաղորդման, տվել հարցազրույցներ և ճեպազրույցներ՝ գործունեության ոլորտներին առնչվող, հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ:

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում տնտեսավարող սուբյեկտների և հանրության իրազեկության մակարդակի բարձրացման և հնարավոր խախտումների կանխարգելման նպատակով կազմակերպվել է հանդիպումներ:*

ՀՀ բոլոր մարզերում Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացված ստուգայցերի, շրջայցերի ընթացքում տեղի են ունեցել իրազեկում–հանդիպումներ տնտեսավարող սուբյեկտների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, որսորդների, ձկնորսների, քաղաքացիների հետ, իրենց իրավունքների և պարտականությունների ոլորտային իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

Հանդիպումների ընթացքում բնապահպանական իրավախախտումների կանխարգելման նպատակով տրվել են մասնագիտական պարզաբանումներ, խորհրդատվություն՝ վարչական իրավախախտումների, ապօրինի որսի, ձկնորսության, ծառահատումների, փայտանյութի, հողի բերրի շերտի տեղափոխման, վայրի կենդանիների անօրինական վաճառքի, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ոչ արտադրական նպատակներով թափուկ վառելափայտի մթերման և բացթողնման, Տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերի, վարչական վիճակագրական, բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների եռամսյակային միասնական հաշվարկների հաշվետվությունների, կենդանական և բուսական աշխարհի, ընդերքի պահպանության, ավտոտրանսպորտային միջոցներով շինարարական նյութերի և աղբի տեղափոխման ժամանակ մթնոլորտային օդի պահպանության պահանջների, արգելված վայրերում, առանց թույլտվության, արգելված գործիքներով որս կատարելու և այլնի վերաբերյալ:

Տնտեսավարողների հետ քննարկվել են թափոնների կառավարման, տրված ջրօգտագործման թույլտվությունների պահանջների կատարման և պահպանման, սահմանային թույլատրելի արտանետումների, հողի բերրի շերտի օգտագործման, հաշվառման, պահպանման կարգերը, տնտեսավարող սուբյեկտների դեմ դիմում-բողոքների, վարչական վարույթների, դատական գործերի, օրենսդրական բացերի, բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման և մի շարք այլ հարցեր:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են.

- Անտառային տնտեսություն վարող անձանց և անտառ օգտագործողների պարտականությունները, անտառների սանիտարական վիճակի պահպանության, անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակիչներին անվճար, ոչ արտադրական նպատակով թափուկ փայտանյութի տրամադրման, ինչպես նաև անտառավերականգնման և անտառապատման աշխատանքների, անտառօգտագործման ընթաքում բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների այդ թվում՝ ՀՀ կարմիր գրքում գրանցված տեսակների պահպանության, անտառային հողերի բերրի շերտի պահպանության կանոնների պահանջների վերաբերյալ պարզաբանումներ:

- Վայրի կենդանիների որսի և ձկնորսության կանոնների, բնության հատուկ պահպանվող տարածքների համար սահմանված ռեժիմների, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, օգտագործման և վերարտադրության օրենսդրական կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ:

- Ջրօգտագործման նոր թույլտվության ստացման, ջրօգտագործման թույլտվությունների փաստաթղթերի ձեռքբերման, ջրահաշվիչների տեղադրման, կապարակնքման, հաշվառման, անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների, արտանետման թույլտվությունների ստացման, օբյեկտների շինարարության ընթացքում արտանետումները կանխարգելող միջոցառումների, հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքների կատարման, վտանգավոր նյութերի և արտադրական ու սպառման թափոնների գործածության՝ առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասազերծման, շրջակա միջավայրում դրանց տեղադրման, վտանգավոր թափոնների անձնագրավորման իրավական կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ:

- Ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության բնագավառում երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքների, դրանց շահագործման համար սահմանված ընդերքօգտագործման պահանջներ, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքության, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման տեղեկատվության ներկայացման, ընդերքօգտագործման ընթացքում բնապահպանական թափոնների կառավարման իրավական կարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ:

- Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական եռամսյակային հաշվարկի, վարչական վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ժամկետների և լրացման կարգերի վերաբերյալ պարզաբանումներ:

- ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1423-Ն, ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 1110-Ն և 2003 թվականի ապրիլի 3-ի «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» N 499–Ն և այլ որոշումներում կատարված լրացումների ու փոփոխությունների վերաբերյալ պարզաբանումներ: Մասնակիցներին տրամադրվել են տեղեկատվական-խորհրդատվական նյութեր և բուկլետներ:

❖ *Տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրված հարցերը և իրավական կարգավորումները.*

Հարց - Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական եռամսյակային հաշվարկի, վարչական վիճակագրական հաշվետվությունների լրացման կարգերի վերաբերյալ:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» N 1291-Ն որոշում:

Հարց - Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալը, ջրօգտագործման թույլտվությունների փաստաթղթերի ձեռքբերման, ջրահաշվիչների տեղադրման, կապարակնքման, հաշվառման և այլ ձևաթղթերի վերաբերյալ:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգիրք և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի թիվ 218-Ն «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման

թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանքցի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին» որոշում:

Հարց - Հողերի օգտագործման և պահպանության ոլորտում՝ հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքների կատարում:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշում:

Հարց - Մթնոլորտային օդի պահպանության ոլորտում՝ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների, արտանետման թույլտվություններ ստացում և օբյեկտների շինարարության ընթացքում արտանետումները կանխարգելող միջոցառումները:

Կարգավորում - «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և Հայաստանի Հանրապետության կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1673-Ն որոշում:

Հարց - Վտանգավոր նյութերի և արտադրական ու սպառման թափոնների գործածության՝ առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման (թափոնի երկրորդային օգտագործում), հեռացման, վնասազերծման, շրջակա միջավայրում դրանց տեղադրման վերաբերյալ:

Կարգավորում - «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Թափոնների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» N 47-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի «Թափոնների

գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման» թիվ 2291-Ն որոշումներ:

Հարց - Կենդանական և բուսական աշխարհների օգտագործման և պահպանության ոլորտում՝ բնապահպանական իրավախախտումների, իրականացվող վարչական վարույթների, դրանցով հաշվարկվող բնությանը պատճառված վնասների հաշվարկի և կիրառվող վարչական տուգանքների, անվճար թափուկ փայտանյութի տրամադրման, դրա տնօրինման վերաբերյալ

Կարգավորում - ՀՀ անտառային, Վարչական իրավախախտումների մասին, ՀՀ քրեական օրենսգրքերով, Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհի պատճառված վնասի հատուցման սակագների հաշվարկի մասին, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին, Կենդանական աշխարհի մասին և Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքներով, ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարների 2011թ. նոյեմբերի 29-ի «Ոչ արտադրական նպատակներով թափուկ վառելափայտի մթերման և բացթողնման» N 253-Ա և N 226-Ա հրամաններ:

3. Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք.

❖ *Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության, վտանգավոր նյութերի արտադրության և սպառման, թափոնների հաշվառման կանոնների օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման և/կամ չկատարման, շրջակա միջավայրին հասցված վնասակար ազդեցության և պատասխանատվության վերաբերյալ պատրաստվել և հրապարակվել է թվով 217 մամուլի հաղորդագրություն, տեղեկանք, պարզաբանում, որոնք ստացել են 2286 տարածում: Հանրությանը ներկայացվել են Տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքների արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասին շաբաթական հաշվետվություններ (թվով 36 հաշվետվություն)՝ ապահովելով թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները:*

Տեսչական մարմնի տարածքային բաժինների ֆեյսբուքյան խմբերի միջոցով հրապարակվել է թվով 176 հաղորդագրություն:

ԶԼՄ-ներում տեղ գտած հանրային հետաքրքրություն ներկայացնող հրապարակումների վերաբերյալ տրվել է 27 բանավոր և 55 գրավոր պարզաբանում:

Ամենօրյա մոնիտորինգի է ենթարկվել ավելի քան 200 լրատվամիջոց, այդ թվում՝ տպագիր մամուլ, հեռուստահաղորդաշարեր, էլեկտրոնային կայքեր, ինչպես նաև Facebook սոցիալական ցանցի օգտատերեր, որի արդյունքում կատարվել է Տեսչական մարմնի գործունեության ոլորտին առնչվող ԶԼՄ-ներով հրապարակված շուրջ 4751 հրապարակումների ուսումնասիրություն, ամփոփում, վերլուծություն, օրվա մամուլի տեսության պատրաստում, համակարգված արխիվի ստեղծում:

Տեսչական մարմնի գործունեությանը հաճախակի անդրադարձ կատարած լրատվամիջոցներ՝



Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարը 2020 թվականի ընթացքում հանդիպել է մի շարք միջազգային և տեղական կազմակերպությունների՝ Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի, Կովկասի բնության հիմնադրամի (CNF), Գերմանիայի Բնության Պահպանության Միության (NABU) հայաստանյան մասնաճյուղի, Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան/SPPA-A-ի, BioGreen & BlueEnergy Network (BBN) համաշխարհային ընկերության, Երևանի կենդանաբանական այգու, «Բնապահպանի տուն» ոչ պետական կազմակերպության ղեկավար կազմի և/կամ ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են Հայաստանի կենդանական և բուսական աշխարհների պահպանության, Սևանա լճի ավազանը և ափամերձ տարածքները նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման, ջրային ռեսուրսների կառավարման հնարավորությունների, ապօրինի ծառահատումների, փայտանյութի տեղափոխման կանխարգելմանն ուղղված մի շարք հարցեր: Կարևորվել են ոլորտի հիմնական առաջնահերթությունները և երկարաժամկետ համագործակցության ու մասնագիտական փորձի փոխանակման հնարավոր հեռանկարները:

Տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին, հասարակական միավորումներին համապատասխան տեղեկատվությամբ ապահովելու, իրենց իրավունքների և

պարտականությունների մասին իրազեկելու նպատակով, ՁԼՄ-ների, Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի, Facebook սոցիալական ցանցի Տեսչական մարմնի պաշտոնական էջի, մամուլի միջոցով հրապարակվել է 18 խորհրդատվական նյութ, իսկ Տեսչական մարմնի տարածքային բաժինների ֆեյսբուքյան խմբերի միջոցով՝ 321 նյութ, հետևյալ թեմաներով՝

- ՀՀ կենդանիների Կարմիր գիրք:
- Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի օգոստոսի 25-ի «Որսի կենդանիների համար նախատեսվող 2020-2021 թվականների օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին» թիվ 296-Ն հրամանի՝ ՀՀ-ում 2020-2021 թվականների սիրողական որսաշրջանի մեկնարկի վերաբերյալ:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մի շարք հոդվածների պահանջների չկատարման դեպքում նախատեսված տուգանքների և այլնի մասին:

Իրականացվել է Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրական տվյալների վարման աշխատանքներ:

Հրապարակվել է 2019 թվականի 2-րդ և 2020 թվականի 1-ին կիսամյակների ընթացքում Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, հարցումների, ինչպես նաև 2019 թվականի ընթացքում թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերի վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն որի՝

- 2019 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ստացվել է 40 հարցում և քաղաքացիների կողմից՝ 90 գրավոր դիմում, թեժ գծի հեռախոսահամարին՝ 55 ահազանգ: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության, ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է թվով 977 իրավախախտում: Հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել թվով 483 անձ: Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է թվով 584 գործ, կարճվել են 123-ը:

- 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հարուցվել է 553 վարչական վարույթ, ստացվել է 84 գրավոր դիմում-բողոք, 17 հարցում, թեժ գծի 119 հեռախոսահամարով՝ 48, Տեսչական մարմնի ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով՝ 24 ահազանգ: Իրականացվել է Տեսչական մարմնի թեժ գծի, սոցիալական ցանցերում պաշտոնական էջերի, կայքէջի տեղեկատվական սպասարկում՝
- Բնապահպանական հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների, բնապահպանների, սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից Տեսչական մարմնի թեժ գծին ստացվել է 113 ահազանգ, որից 9-ը վերաբերել է բուսական, 15-ը՝ կենդանական աշխարհի, 13-ը՝ շրջակա միջավայրի վրա վնասակար այլ ազդեցություններին, տրամադրվել է թվով 76 մասնագիտական խորհրդատվություն: Իրականացվել է արագ արձագանքում, սահմանված կարգով տրվել ընթացք և լուծումներ: Ստացվել են նաև Տեսչական մարմնի իրավասությունից դուրս գտնվող ահազանգեր և հարցումներ, որոնք վերահասցեագրվել են համապատասխան լիազոր մարմիններին: 2019 և 2020թթ. ընթացքում Տեսչական մարմնի թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերի գծապատկեր՝



Ֆեյսբուք սոցիալական ցանցի Տեսչական մարմնի պաշտոնական էջի տեղեկատվական սպասարկման ընթացքում 164 օգտատիրոջ կողմից ոլորտի վերաբերյալ բարձրացված բոլոր հարցերին տրվել է համապատասխան ընթացք:

Տեղադրվել են հաղորդագրություններ, պարզաբանումներ տեսանյութեր, իրազեկումներ, հայտարարություններ, լուսանկարներ և այլն:

Ստեղծվել են Տեսչական մարմնի տարածքային բաժինների ֆեյսբուքյան խմբեր, որոնց միջոցով բնապահպանության և ընդերքի ոլորտների վերաբերյալ հրապարակվել է թվով 1433 նյութ, որից 321 խորհրդատվական նյութ, 176 կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, հաղորդագրություններ, տեղեկատվական բնույթի 936 նյութ:

Facebook սոցիալական ցանցի Տեսչական մարմնի պաշտոնական էջն ունի շուրջ 4911 հետևորդ, որից 2017թ.՝ 379 օգտատեր, 2018թ.՝ 1031 օգտատեր, 2019թ.՝ 1070 օգտատեր, 2020թ.՝ 2431 օգտատեր (*Գծապատկեր 5*):



Youtube կայքում ստեղծվել է Տեսչական մարմնի պաշտոնական էջ, որտեղ հրապարակվել է 37, Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ այլ լրատվամիջոցների կողմից 56 տեսահոլովակ/տեսանյութ:

Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկման ընթացքում պարբերաբար թարմացվել են կառուցվածքի, նորությունների, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի, հետադարձ կապի, թափուր պաշտոնների և այլ բաժինները: Ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը, գործունեության թափանցիկությունը, հետադարձ կապը:

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի («ԷԿԵՆԳ» ՓԲԸ) հետ համատեղ կատարվել են Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի կատարելագործման և տեխնիկական վերազինման աշխատանքներ, որոնք ժամանակավորապես կասեցվել են 27.09.2020թ.՝ ՀՀ-ում ռազմական դրությամբ պայմանավորված:

ՀՀ պարետի 2020 թվականի հունիսի 16-ի N 139 և օգոստոսի 18–ի N 253 որոշումների համաձայն՝ հունիսի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից կատարված ամենօրյա վերահսկողական գործառույթների, ստուգայցերի, մշտադիտարկումների ընթացքում իրականացվել են նոր կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության կանխարգելմանն ուղղված բացատրական, իրազեկման, խորհրդատվական աշխատանքներ, որոնք ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ լուսաբանվել են ամենօրյա ռեժիմով (աշխատանքային և հանգստյան օրերին), այդ թվում՝ կազմակերպվել են հարցազրույցներ, նաև ուղիղ եթերում, տարածվել մամուլի հաղորդագրություններ, հրապարակվել տեսանյութեր և այլն:

4. Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները.

❖ *Տեսչական մարմինը 2020 թվականին ստուգումներն իրականացրել է Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 01 որոշմամբ հաստատված ստուգումների տարեկան ծրագրով, ինչպես նաև ստուգումներ իրականացրել է ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ իրավապահ մարմիններից, ՀՀ պետական այլ մարմիններից, հասարակական կազմակերպություններից և քաղաքացիներից ստացված գրությունների և այլ հիմքերով:*

❖ *Տեսչական մարմնի ղեկավարի կողմից 2020 թվականին ընդհանուր առմամբ տրվել է թվով 152 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր, որից փաստացի ավարտվել է 110-ը: Ավարտված ստուգումներից 16-ը 2019 թվականից 2020 թվական տեղափոխված ստուգումներ են: Թվով 152 ստուգումից 33-ը տեղափոխվել է 2021 թվական, իսկ 9-ը՝ ճանաչվել է անվավեր: Ավարտված 110 ստուգումներից 76-ը արտածրագրային ստուգումներ են (ընդհանուր ստուգումների մեջ ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների քանակը կազմում է 69%): 2019 թվականին Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ընդհանուր առմամբ տրվել է թվով 160 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր, իսկ 2018 թվականին թվով 116 ստուգում: 2019 թվականի համեմատությամբ 5% նվազել է, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ աճել 31%:*

❖ *2020 թվականին ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր իրականացնել թվով 90 ստուգում, որից թվով 54 /60%/ ստուգման համար տրվել է հանձնարարագիր (34-ն ավարտված են /63%/, 3-ը չեղյալ և 17-ը տեղափոխվել է 2021թ):*

❖ *Տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան ծրագրով նախատեսված 36 տնտեսվարողների մոտ ստուգման հանձնարարագիր կամ հրաման չի տրվել՝ պայմանավորված երկրում հայտարարված արտակարգ և ռազմական դրությամբ:*

Թվով 152 ստուգումներն իրականացվել են հետևյալ հիմքերով՝

- ՀՀ վարչապետի հանձնարարականով - 13 ստուգում, որից 9-ը ավարտվել է, 4-ը՝ տեղափոխվել 2021 թվական,

- 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրով - 54 ստուգում, որից 34-ը ավարտվել է, 3-ը՝ ճանաչվել է անվավեր, 17-ը՝ տեղափոխվել է 2021 թվական,
- ՀՀ իրավապահ մարմիններից ստացված գրությունների հիման վրա - 22 ստուգում,
- որից 16-ը ավարտվել է, 2-ը՝ տեղափոխվել է 2021 թվական, 4-ը՝ ճանաչվել է անվավեր,
- ՀՀ նախարարարարություններից ստացված գրությունների հիման վրա - 30 ստուգում, որից 26-ը ավարտվել է, 4-ը՝ տեղափոխվել է 2021 թվական,
- ՊԵԿ-ից ստացված գրության հիման վրա – 1 ստուգում, որից ավարտվել է 1-ը,
- քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների հիման վրա - 17 ստուգում, որից 12-ն՝ ավարտվել է, 5-ը՝ տեղափոխվել է 2021 թվական,
- Տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրությունների հիման վրա - 7 ստուգում, որոնք ավարտվել են,
- Տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտներին տրված խախտումները վերացնելու մասին պարտադիր կատարման հանձնարարականների ստուգման հիքով- 4 վերստուգում, որից 3-ն՝ ավարտվել են, 1-ը ճանաչվել է անվավեր,
- հասարակական կազմակերպություններից ստացված գրությունների հիման վրա - 3 ստուգում, որից 1-ն ավարտվել է, 1-ը՝ տեղափոխվել 2021 թվական, 1-ը ճանաչվել է անվավեր,
- Ազգային ժողովի պատգամավորից ստացված գրության հիման վրա - 1 ստուգում, որն ավարտվել է:

Ստուգման արդյունքները

❖ 2020 թվականի ընթացքում 110 ավարտված ստուգումների (3-ը վերստուգում) ամփոփման արդյունքում կազմվել է 86 ստուգման ակտ և 24 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տեսչական մարմնի կողմից կայացվել է՝

- թվով 87 վարչական տուգանք նշանակելու մասին որոշում՝ 15 900 000 ՀՀ դրամի գումարի չափով,
- թվով 37 ստուգման արդյունքներով հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 170 389 408 ՀՀ դրամի չափով վնաս,
- թվով 52 ստուգման և վերստուգման արդյունքներով հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ տնտեսավարողներին տրվել են 52 հանձնարարականներ, որոնցից լիովին կատարվել է 23-ը (*Աղյուսակ 12-ում)*:

			Աղյուսակ 12
Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների համեմատական			
Հանձնարարագրեր	***2018 թվական***	***2019 թվական***	***2020 թվական***
Հրապարակված հանձնարարագրեր, որից	**116**	**160**	**152**
ուժը կորցրած	15	7	9
կասեցված	0	2	15
տեղափոխված հաջորդ տարի	16	17	18
ավարտված	85	134	110
Տարեկան ստուգումների ծրագիր, որից	**250**	**0**	**90**
նախորդ տարվանից տեղափոխված	0	9	0
հրապարակված հանձնարարագրեր	66	0	54
ավարտված	48	0	34
Արտածրագրային ստուգումներ, որից	**50**	**151**	**98**
Վարչապետի հանձնարարականով	19	22	13
իրավապահ մարմինների գրություններով	16	26	22
քաղաքացիներից ստացված դիմում-բողոքներով	7	33	17
ՀՀ գերատեչությունների գրություններով	5	62	39
խախտումները վերացնելու հանձնարարականով	1	8	4
այլ	2	0	3

❖ *Տեսչական մարմնի խորհրդի կողմից 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 10 և 11 որոշումներով հաստատվել է 2021 թվականի ստուգումների և գործունեության տարեկան ծրագրերը:*

5. Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը.

❖ *Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում վերհանվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, որոնք ներկայացված են Աղյուսակ 13-ում:*

1) *ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ, 21-րդ, 32-րդ, 46-րդ, 59-րդ և 65-րդ հոդվածներ,*
2) *ՀՀ «Ջրային օրենսգրքի» 21-րդ, 32-րդ, 27-րդ, 37-րդ, 99-րդ, 103-րդ և 104-րդ հոդվածներ,*
3) *ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ, 8-րդ, 36-րդ և 110-րդ հոդվածներ,*
4) *«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15-րդ, 21-րդ և 41-րդ հոդվածներ,*
5) *ՀՀ Հարկային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 175-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 212-րդ հոդվածներ:*

Աղյուսակ 13

Տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումներ	**Իրավախախտումների քանակը**		
	2018 թվական	**2019 թվական**	**2020 թվական**
ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք	**65**	**64**	**32**
ՀՀ ջրային օրենսգիրք	**33**	**81**	**58**
ՀՀ հողային օրենսգիրք	**30**	**30**	**20**
ՀՀ հարկային օրենսգիրք	**35**	**57**	**35**
Թափոնների մասին ՀՀ օրենք	**61**	**40**	**28**
Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք	**54**	**36**	**21**
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	**10**	**13**	**7**
Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք	**0**	**5**	**3**
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	**0**	**0**	**1**
Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենք	**0**	**0**	**1**
Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք	**0**	**0**	**2**
Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	**3**	**1**	**5**
Անտառային օրենսգիրք	**10**	**11**	**2**
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	**1**	**5**	**1**
Ընդամենը	**302**	**343**	**216**

6. Օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով.

❖ *Օրենսդրական բացերը լրացնելու, Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով՝ առաջարկվում է իրականացնել փոփոխություններ և լրացումներ հետևյալ իրավական ակտերում.*

- *«Շինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով հանված հողի բերրի շերտի վաճառքի կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.*

  Որոշման նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել շինարարական աշխատանքների հետևանքով հանվող հողի բերրի շերտի նպատակային օգտագործումը՝ պակաս արդյունավետ հողերի բարելավման համար, ինպես նաև բուսահողի վաճառքի համար իրավական հիմքերի ստեղծումը՝ ինչն էլ կնվազեցնի հողի բերրի շերտի հանման, պահման, կուտակման և վաճառքի հետ կապված ապօրինի գործողությունները:

- *«Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումների տեղադրման, կնքման և օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ.*

  Որոշման նախագծի ընդունմամբ ակնկալվում է ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության կարգավորման արդյունքում ապահովել ստորերկրյա քաղցրահամ ջրերի ռացիոնալ օգտագործումը և պահպանությունը:

- *«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», - ՀՀ օրենք, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին», ՀՀ*

օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետությունում սպուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» - ՀՀ օրենք, «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, «Նորմատիվների օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» - ՀՀ օրենքների նախագծերի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծ.

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է ներդնել ժամանակակից վճարման էլեկտրոնային համակարգ, ճանապարհները հագեցնել անհրաժեշտ սարք-սարքվորումներով, սահմանել այլ երկրներում և ՀՀ-ում գրանցված 12 տոննա և ավել թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար տրանսպորտային միջոցների ընդհանուր օգտագործման ճանապարհներից օգտվելու միասնական վճարի չափ, գանձման մեխանիզմներ, բացառել գերբեռնված բեռնատար տրանսպորտային միջոցների երթևեկությունը, վարել դրանց շարժի վերաբերյալ հստակ վիճակագրություն:

- *«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2085-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:*

  Որոշման արդյունքում կհաստատվեն բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի նկարագիրը և ձևը, պետական տեսուչի համազգեստը կրելու կարգն ու պայմանները:

❖ *2020 թվականի ընթացքում ընդունված Օրենքներ և ՀՀ կառավարության որոշումներ*

- *«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք 2020 թվականի հոկտեմբերի 6-ի ՀՕ-452-Ն,*

  Բնապահպանական իրավախախտումների դեպքում նախատեսվել է բնապահպանական տեսուչի կողմից իրավախախտում թույլ տված անձանց գործունեությունը կասեցնելու լիազորություն՝ շրջակա միջավայրին և բնական ռեսուրսներին սպառնացող վնաս կանխելու նպատակով: Ընդ որում, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պաշտպանության ապահովման կարևորությամբ պայմանավորված, որպեսզի ստուգվող տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը կասեցնելու մասին որոշման բողոքարկումը չկասեցնի այդ որոշման կատարումը, այդ որոշումը պետք է ենթակա լինի անհապաղ կատարման՝ ելնելով հանրային շահերի ապահովման անհրաժեշտությունից: Նշվածը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից և վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից, որոնց համաձայն՝ վարչական ակտի բողոքարկումը (համապատասխանաբար վարչական և դատական կարգով) չի կասեցնում դրա կատարումը օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման:
- *«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-401-Ն,*

  Օրենքի նախագծով վերացվում է գործող օրենսդրությամբ չափագիտական վերահսկողություն իրականացնելու համար ստուգումն սկսելուց առնվազն երեք

աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնելու մասին սահմանված պանանջը՝ հաշվի առնելով, որ տնտեսավարող սուբյեկտները, նախապես տեղեկանալով ստուգման մասին սահմանված նորմերին չափագիտական վերահսկողության ենթակա օբյեկտները թերությունները վերացնում են և պահանջվող նորմերին համապատասխանեցնում են միայն տվյալ օրը: Ընդունված օրենքի փոփոխության արդյունքում կբարձրանա տեսչական մարմնի կողմից չափագիտության ոլորտում իրականացվող վերահսկողության արդյունավետությունը:

- *«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի թիվ 2085-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 25 N 1091-Ն որոշում:*

  Որոշման արդյունքում հաստատվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանի նկարագիրն ու ձևը:

7. Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին.

Աղյուսակ 14

Հ/Հ	***Հայցվոր (Բողոքաբեր)***	***Հայցապահանջի (Հայցի առարկայի) նկարագիր***	***Վարչական տուգանքի չափը***	***Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը***
Տեսչական մարմին բողոքարկված				
1.	«ՍԱՍ-Գրուպ» ՍՊԸ	2020թ. ապրիլի 4-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/20-Ա որոշումը ամբողջությամբ անվավեր ճանաչելու պահանջի մասին	80.000 (ութսուն հազար ՀՀ դրամ) որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
2.	«Վիտամինների գործարան» ԲԲԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի 28.04.2020թ թիվ ԵՏ/36-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին	80.000 (ութսուն հազար ՀՀ դրամ) որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
3.	«Գասպարյան և որդիներ» ՓԲԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի պետ՝ Ա. Լաբլաջյանի 28.04.2020թ թիվ ԵՏ/33-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին	80.000 (ութսուն հազար ՀՀ դրամ) որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
4.	«ՍՆԵԿԱՐՄ» ՍՊԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի պետի 27.04.2020թ թիվ ԵՏ/24-Ա որոշումը վերացնելու մասին	80.000 (ութսուն հազար ՀՀ դրամ) որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0

5.	«ԵՐ-ՌՈՒ» ՍՊԸ	ԲԸՏՄ Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի 27.05.2020թ թիվ 07/23-Վ որոշման դեմ բողոքարկում	50.000 (հիսուն հազար ՀՀ դրամ) որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
6.	«Մեթր-Սթիլ» ՍՊԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի կողմից 14.04.2020թ թիվ ԵՏ-35 արձանագրությունը համարել անվավեր և չեղարկել 28.04.2020թ. թիվ ԵՏ/22-Ա որոշումը:	80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է Տուգանք՝ 80. 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0
7.	Հմայակ Ղազարյան Ա/Ձ	ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 29.06.2020թ թիվ 04/41-Ա որոշման դեմ բողոքարկում:	50.000 (հիսուն հազար ՀՀ դրամ) որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
8.	«Վիլլաշին» ՍՊԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի պետի 18.06.2020թ թիվ ԵՏ/61-Ա որոշումը վերանայելու մասին	50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0
9.	«ԻԶՈՏՈՆ» ՍՊԸ	ԲԸՏՄ Վայոց Ձորի տարածքային բաժնի պետի 22.06.2020թ թիվ 09/09-Ա որոշման դեմ բողոքարկում:	50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
10.	«ԵՅ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ	ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի 26.06.2020թ թիվ 59 ստուգման ակտի դեմ բողոքարկում:	Ստուգման ակտի դեմ բերված բողոքը մերժել է:	0
11.	Ռոբերտ Առաքելյան	ԲԸՏՄ Սյունիքի տարածքային բաժնի պետի 13.07.2020թ թիվ 10/20-Ա որոշման դեմ բողոքարկում:	150. 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0
12.	Սուրեն Հմայակյան Ա/Ձ	ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 29.06.2020թ թիվ 04/42-Ա որոշման դեմ բողոքարկում:	50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
13.	Գագիկ Կարապետյան Ա/Ձ	ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 17.08.2020թ թիվ 04/53-Ա որոշման դեմ բողոքարկում:	50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0

14.	Ժիլբերդ Կարապետյան Ա/Ձ	ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 17.08.2020թ թիվ 04/55-Ա որոշման դեմ բողոքարում	50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
15.	«Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի պետի 18.06.2020թ թիվ ԵՏ/62-Ա որոշման դեմ բողոքարկում	50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
16.	Վահե Հակոբյան	ԲԸՏՄ Լոռու տարածքային բաժնի պետի ժ/պ-ի 10.09.2020թ թիվ ԼՏ/91-Ա որոշման դեմ բողոքարկում	100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որոշումը բեկանվել է, վճարման ենթակա չէ	0
17.	Արթուր Հովհաննիսյան	ԲԸՏՄ Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի 27.07.2020թ թիվ 07/39-Վ որոշման դեմ բողոքարկում	80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0
18.	«ՀԱԷԿ Լին» ՓԲԸ	ԲԸՏՄ Երևանի տարածքային բաժնի պետի 17.09.2020թ թիվ ԵՏ/81-Ա որոշման դեմ բողոքարկում	50. 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0
19.	«Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ	ԲԸՏՄ Վայոց Ձորի տարածքային բաժնի պետի 28.09.2020թ թիվ 09/28-Ա որոշման դեմ բողոքարկում	200. 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0
20.	«Սանռայզ Էլեկտրիկ» ՓԲԸ	ԲԸՏՄ Վայոց Ձորի տարածքային բաժնի պետի 28.09.2020թ թիվ 09/32-Ա որոշման դեմ բողոքարկում	200. 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, բողոքը մերժվել է	0

Հ/Հ	Հայցվոր (Բողոքաբեր)	Հայցապահանջի (Հայցի առարկայի) նկարագիր	Վարչական տուգանքի չափը	Շրջակա միջավայրին հասցված վնասի
Դատարան բողոքարկված				
1.	Կորյուն Հովհաննիսյան	19.11.2019թ"վարչական տուգանք նշանակելու մասին թիվ US10/34-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին	50.000	
2.	«ԵղեգՀԷԿ» ՍՊԸ	03.07.2020թ. թիվ 48 ակտը վերացնելու պահանջի մասին	0	3.813.821
3.	«ԵղեգՀԷԿ» ՍՊԸ	03.07.2020թ. թիվ 09/05-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին	0	3.813.821
4.	Մերուժան Ասատրյան	5.03.2020թ. թիվ ԵՏ/04-Ա որոշումն ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին	200.000	0
5.	Ավագ Միքայելյան	02.12.2019թ. թիվ 02-14 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին		
6.	Սմբատ Ավետիսյան	12.12.2019թ. թիվ ՋՄ/05-Ա որոշումն ամբողջությամբ վերացնելու, որպես անվավերության հետևանք 12.12.2019թ. թիվ ՄՎՏ 11-Ա որոշումը և թիվ ՋՄՀԹՎՆ-09 հանձնարարականը վերացնելու պահանջի մասին	300.000	3.367.941
7.	Արտակ Հասրաթյան	25.12.2019թ. թիվ 03/69-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին	50.000	0
8.	Արշակ Սարիբեկյան	23.06.2020թ. «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 08/097/20-ՎՏ որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	150.000	0

9.	«Լիլիթ 87» ՍՊԸ	21.08.2020թ. ստուգման ակտը և բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի մասին ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի 21.08.2020թ. հաշվարկը՝ որպես ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արագածոտնի տարածքային բաժնի կողմից կազմված թիվ 84 ակտի հետևանք, ամբողջությամբ վերացնելու պահանջի մասին		11.470.000
10.	«Գաջեգործ» ՍՊԸ	13.02.2020թ. <<<<Գաջեգործ>> ՓԲ ընկերությունում իրականացված ստուգման>> ակտի 2-րդ, 9-րդ, 5-րդ, 6-րդ, 13-րդ և 14-րդ կետերն, ինչպես նաև 03.02.2020թ. <<Բնօգտագործման վճարի բազայի չափաքանակների /սահմանափակումների/>> թիվ 112 ստուգման ակտի 2-րդ կետի 1-7-րդ ենթակետերի և 3-րդ կետի ընդունմանն ուղղված Տեսչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին	100.000	3.743.063
11.	Գագիկ Սահակյան	04.02.2020թ. թիվ LS/14-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին	300.000	0
12.	«Ջաղացի Ձոր» ՓԲԸ	29.07.2020 թվականի թիվ 11/07 որոշումը վերացնելու պահանջի մասին	200.000	1.471.440

13.	Արբեն Ղույլան	26.06.2020 թվականի թիվ 59 ստուգման ակտը և 08.12.2020 թվականի թիվ 04/-07-Ա որոշումը	200.000	1.135.642
14.	Մայիս Մկրտչյան	28.09.2020թ. թիվ 09/28-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին	200.000	
15.	Մայիս Մկրտչյան	23.10.2020թ. թիվ 28 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին	200.000	
16.	«ՍանռայզԷլեկտրիկ» ՓԲԸ	28.09.2020թ. <Վարչական տույժ նշանակելու մասին> թիվ 09/32-Ա և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 23.10.2020թ. <Վարչական իրավախախտման գործով կայացված որոշումն անփոփոխ թողնելու մասին> թիվ 29 որոշումները	200.000	
17.	«Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ	28.09.2020 թվականի թիվ 09/28-Ա և 23.10.2020 թվականի թիվ 28 որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին	200.000	
18.	Արմեն Հակոբյան	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի՝ 28.09.2020թ. թիվ 09/27-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին	200.000	
19.	Լավրենտի Միքայելյան	16.07.2020 թվականի վարչական տույժ նշանակելու մասին թիվ US10/24-Ա որոշումը	200.000	
20.	«Գեգամետ» ՓԲԸ տնօրեն Գրիգոր Ավագյան	08.06.2020 թվականի թիվ 07/26-Վ որոշումը վերացնելու պահանջի մասին	150.000	

❖ **Դատարան բողոքարկված գործերը գտնվում են քննության փուլում:**

Աղյուսակ 15

Տեսչական մարմնի կողմից դատարան ներկայացված հայցեր			
			ՀՀ դրամ
1	Արսեն Պետրոսյան	Ջրային ռեսուրսներին պատճառված վնաս	133,582,867
2	Հովիկ Թադևոսյան	Ջրային ռեսուրսներին պատճառված վնաս	37,464,768
3	Լեոնարդ Կարապետյան	Ջրային ռեսուրսներին պատճառված	96,415,272

Աղյուսակ 16

Դատարան բողոքարկված գործերի վերաբերյալ	
Հաշվետու տարի	***Գործերի քանակ***
2018	2
2019	33
2020	20

8. Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում

❖ *«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն Տեսչական մարմինը պետք է ունենա գործունեության կատարողականի գնահատման մեթոդոլոգիա, որը հաստատված չէ խորհրդի կողմից:*

❖ *Վերը նշված մեթոդոլոգիային բացակայության պատճառով հնարավոր չէ գնահատել Տեսչական մարմնի գուծունեության կատարողականը:*

❖ *2021 թվականի առաջիկա խորհրդի նիստին կներակայացվի 2020 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների հաշվետվությունը, որտեղ կամփոփվեն Տեսչական մարմնի տարեկան գործունեություն արդյունքները:*